




“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1889

ԹԻՒ 2



ՄՈՆ ՊԱՆ

Տղայոց Աւետարեանն մէջ գտնելով այլ և այլ պատկերներ, պարտացուցած ենք մեր ընթերցողները երբեմն այս և երբեմն այն երկիրը: Այս տարի կը խնդրենք ձեռնէ որ քանի մը ամիս մեզի հետ անցունէք Զուիցերիա: Զուիցերիա է փոքրիկ երկիր մը և Օսմանեան Պետութեան միակ կուսակալութենէ մը շատ մեծ չէ. բայց Եւրոպայի մէջ չկայ ուրիշ երկիր մը որ ու-

ՄՈՆ ՊԱՆ

նենայ այնպիսի վտեմ տեսարաններ: Բնակիչք, որոց մէկ մասն է Բողոքական և մէկ մասը՝ Կաթոլիկ, գրեթէ երեք միլիոն են, և առ հասարակ պարզ և համակրանք գրաւող ժողովուրդ մըն են: Երջանիկ են, վասն զի Եւրոպայի մեծ տէրութիւնք երաշխաւորած են անոնց հայրենեաց անկախութիւնը և չէզըլութիւնը, և Մեծին Նախորդենի անկումէն հետէ ի

Զուիցերիա չէ մտած թշնամոյ բանակ:

Կարծեմք յարմար է որ Զուիցերիոյ վերաբերեալ մեր պատկերներէն առաջինը ներկայացունէ զՄոն Պլան որ Եւրոպայի մէջ ամենէն բարձր գագաթ ունեցող լեռն է, թէպէտ այս գագաթը սահմանագլխոյն Գաղիական կողմը կ'իյնայ: Լեռան գագաթը ծովուն երեսէն 15,732 ոտք բարձր է, և վերէն սկսելով մինչև 7,000 ոտք

վարձ ծածկուած է մտնջնաւոր ձիւնով: Այսու ամենայնիւ Մոն Պլան Արարատ լեռնէն իբր 1,600 ոտք ցած է, և անոր բարձրութիւնը Հիմալայա լեռանց ամենէն բարձր գագաթին բարձրութեան կէսէն քիչ աւելի է: Այս լեռան ոտքն է Եւֆրատի անուն գեղեցիկ հովիտը: Այս ալ կ'երեւի պատկերին մէջ: Յիշեալ հովտին մէջէն վազող գետն է Արվ, Ռոն գետոյն մէկ ճիւղը: Օգոստոս և Սեպտեմբեր ամսոց մէջ այս հովտին գիւղերը կը լեցուն այցելուներով, որոց ոմանք կ'ելլեն Մոն Պլան առաջնորդներու օգնութեամբ: Այս առաջնորդները այս գործին համար յատուկ արտօնութիւն ըստացած են Գաղիոյ կառավարութենէն:

ՓՈԹՈՐԻԿԷՆ ԵՏՔԸ


Եթէ իսկոյն փոխադրուէինք պատկերին մէջ ձեր տեսած նաւուն տախտակամածին վրայ, կարծեմ շատ տխուր պիտի սեպէինք մեր վիճակը: Բայց այդ նաւուն նաւաստիք այդպէս չեն խորհիր. ընդհակառակն անոնց սիրտերը լեցուն են ուրախութեամբ և յուսով: Անոնք քիչ մը առաջ բռնուած էին սոսկալի փոթորկի մը, որ առած տարած էր նաւուն երեք կայմերն ալ, և վախցած էին թէ իրենց նաւը կարող պիտի չըլլար շատ երկար դիմանալ հովին և ալիքներուն կատաղութեանը: Բայց այժմ փոթորիկը դադրած է, և նաւաստիները տնկած են կարճ առժամանակեայ կայմ մը և անոր վրայ պարզած են փոքրիկ առաքաստմը, որուն օգնութեամբ կ'աճապարեն հասնիլ ամենէն մօտ գրանուող նաւահանգիստը ուր իրենց նաւուն աւրուած մասերը պիտի նորոգուին: Կեանքը այնչափ քաղցր չերևիր քան որչափ երբ կը յափշտակուի մահուան ժանիքներէն:

Այն սոսկալի փոթորկին վայրկեաններուն մէջ նաւաստիք բնականապէս կը մտածէին իրենց տուներուն և ընտանեացի վրայ զորոնք կը վախնային թէ այլևս պիտի չտեսնէին. բայց եթէ ապահով հասնին իրենց տուները, պիտի զուարճանան պատմելով իրենց տղոցը և բարեկամաց թէ ինչ սոսկալի փոթոր-

կի պատահեցան և ազատեցան: Այսպէս նաև երբ լինուց մեր ճամբորդութիւնն այս կեանքին մէջ, և եթէ անգամ մը հասնինք երկնաւոր տունը, հաճութեամբ պիտի յիշենք երկրիս վրայ մեր կրած այն վանագները որոցմէ ազատեցանք: Տէրը շնորհէ որ մենք ամէնքս ունենանք այս երջանիկ փորձառութիւնը. և եթէ մեծ աղէտ մը հասնելով առնու տանի մեր շատ սիրելի երկրաւոր ստացուածքները, չյուսահատինք, այլ այն նաւաստեաց նման կանգնենք առժաման-

գերքներուն վրայ: Սառերը սկսած էին հալիլ, և կամաց կամաց կը փրթէին իրենց փակած տեղերէն: Կ'երևի թէ կինը չէր նշմարած թէ սառին այն մասը որուն վրայ կը կենար ինք, զատուած էր լճին եզրէն, և տակաւին չհասկցած թէ վտանգի մէջ կը գտնուէր, հովը առած տարած էր լճին եզրերէն բաւական հեռի:

Երբ այս տատանող սառը գտնուեցաւ, շատ սրտաշարժ տեսարան մը ներկայացաւ տեսնողներուն աչաց: Սառին վրայ պառկած կը կենային թէ՛ մայրը և թէ՛ տղեկը, երկուքն ալ սառելով մեռած: Մայրը հասած էր



ՓՈԹՈՐԻԿԷՆ ԵՏՔԸ

նակեայ կայմ մը որ բռնէ մեր կորսնցուցածին տեղը, և երթանք յառաջ դէպի երկնային նաւահանգիստը ուրախութեամբ և յուսով: Վասն զի փոթորիկ մը կարող չէ զրկել զմեզ մեր փրկութեան Առաջնորդէն որ կրնայ յառաջ վարել մեր նաւը մեծագոյն վտանգաց մէջէն, և ըսել հովին և փոթորկին, «Դագարէ՛, լուսկեցիր»:

ՄՈՐ ՄԸ ՍԵՐԸ

Հիւսիսային Ամերիկայի վայրենեաց ցեղապետներէն մէկուն կինը իւր մանուկը կռնակն ունենալով ճամբան կորսնցուցած կը թափառէր Ամերիկայի մեծ լիճերէն մէկուն սառած ե-

լիւր վրայէն բոլոր տաքցունող հանդերձները և անոնցմով փաթթած էր իւր սիրելի մանկիկը, և մինչ պառկած կը մեռնէր, մինչև իսկ իւր կենաց վախճանին խելքը զլուխը ժողված՝ իւր մարմինը այնպիսի դիրքի մը մէջ դրած էր որ պաշտպանէր իւր զաւակը ցրտասառոյց փոթորկին դէմ որ մահ կը կրէր իւր թևոց վրայ:

Ինչ սէր կը գերազանցէ այն վայրենի կնոջ դէպի իւր մանկիկն ունեցած սէրը: Նա իւր անձը կը դնէր այն սաստիկ ցուրտ հովին դէմ և կը յունձնէր մահուան, որպէս զի, եթէ հնար էր, ազատէր իւր զաւակին կեանքը: Բայց ինչ է մինչև անգամ այս սէրը բաղդատելով Տէր Յիսուսի սիրոյն հետ: Միայն ճրագի մը լոյս է կէս օրուան արևուն ճառագայթից

առջև : Տէր Յիսուս մեռաւ աշխարհ մը լեցուն թշնամեաց համար, մինչ անոնք էին անաստուած, տկար և մեղաւոր :

Ո՛հ, Տէր Յիսուսի այս հիանալի և անհասանելի սերը : Այս սերն էր որ իջեցուց գնա երկնից փառաւոր բարձրութենէն այս մեղքով խաւարած երկիրը : Այս սերն էր որ յանձն առնուլ տուաւ անոր կրել Գողգոթայի անաւոր չարչարանքները, և մարդոց նախատինքը և ատելութիւնը :

Անոր սերը վշտաց տէր ըրաւ վնաս ժամանակ մը : Եւ նա հիմա է համբերող, որ կը սպասէ փրկել բոլոր անոնք որ իրեն կու գան :

Նա չուտով պիտի ուրախանայ, երբ «իր անձին աշխատութեան պատուը տեսնելով պիտի կշտանայ» :

Ձեր սիրտերը չե՛ն քաշուիր դէպի Տէր Յիսուս մինչ կը կարդաք անոր զարմանալի չնորհքին և սիրոյն վրայ :

Ո՞Ր ՏՂԱՆ ԱՂԵՆ ԳԻՐ ՊՈՏԻ ԳԻՔ

Ճարտն ընակող մը հետեւեալ կերպով կը բացատրէ ձեր առջևի տարօրինակ պատկերը .

«Ճարտոյ առաջին կամ երկրորդ օրը գիր գրել սորվող տղաք թղթի կտորներու վրայ այլև գիրեր կը գրեն, իրեն իրենց գիրերուն օրինակները : Անոնք կը ծալուին, կը կապուին կարմիր և սև կեղտոյն լարերով, և կը դրուին կուռքերուն ներքև գանուող դարակին (քճ) առջև կեցած զարդերուն մէջերը : Ամսուս տասնուհինգին, բակին մէջ կրակ մը կը վառուի, զարդերը կը նետուին անոր մէջ, մինչ տղաքը եռանդով կը դիտեն թէ իրենցմէ որո՞ն թուղթը օդին մէջ ամենէն բարձր կ'ելլէ բոցերուն հետ, վասն զի հաւտացած են թէ զայն դրող տղան շատ հանճարեղ քարտուղար մը պիտի ըլլայ» :

Կարծեմ գիտեմ քարտուղարութեան մէջ գերագոյն աստիճան ունենալու ասկէ աւելի լաւ միջոց մը : Ձեր գրպանը գալու եմ դիտել տեսնելու թէ որ աշակերտը հոգ կը տանի իւր գիրը գրել օրինակին ճիշդ նման, և բռնել իւր գրիչը ճիշդ ինչպէս վարժապետը հրահանգ կու տայ : Տարակոյս չունիմ թէ այս աշակերտը եթէ յարատեւ այսպէս՝ աղէկ գրել պիտի սորվի, երբ տղայ էի վարժապետս կ'ըսէր ինձ, Ո՛վ որ կ'ուզէ լաւ գրել, պարտի նախ սիրահար ըլլալ գրելու :

ՓՈՒՔ ԱՂԶԿԱՆ ՄԸ ԸՐԱՏԸ

Ամերիկայի քաղաքական պատերազմին սկիզբները երիտասարդ զինուոր մը այնպէս աստիկ վիրաւորուեցաւ ոտքէն, որ հարկ եղաւ կտրել զայն : Հիւանդանոցէն ելլելէն ետքը, յիշեալ զինուորը երեւի անձի մը միջոցաւ կառավարութեան չոր խոտ և ցորեն կշտելու պաշտօնին վրայ գրուեցաւ : Պաշտօնին վրայ գրուելէն քիչ ետքը

երիտասարդին վրայ անուշ կարգուած անձը ըսաւ անոր . «Նայէ՛, սա խոտը այսչափ կը կշտէ սա կշիւքով, բայց կառավարութեան համար այսչափ աւելի կը կշտէ» : «Ես չեմ հասկընար այդ կերպ գործ, Տէր իմ, ես միայն մէկ և այն ալ շիտակ կշիւքով կրնամ գործ ընել», պատասխանեց երիտասարդը :

Տեսուչը մէկ կողմ գնաց բերնէն սպառնալից խօսքեր հանելով : Այդ օրէն երիտասարդը հալածանքներ կրել սկսաւ իւր հաւատարմութեան համար, և շատ ժամանակ շանցած բուռեցաւ անոր թէ այլ ևս գործ չունէր հնուարկապէս յանկարծ արձակուելուն պատճառաւ երիտասարդին սիրտը շատ կուտ

բերութեամբ ապաստելն ետքը ներկայացաւ Մր. Լինքընի առջև .

Այցելուներ ընդունելու ժամանակը գրեթէ լնցած էր, և երբ մտաւ սրահը, Նախագահը թիմնաթուռի մը վրայ իյնալով «Ի՛նչ խնդիր ունիս, փոքրիկ աղջիկ», ըսաւ յոգնած ձայնով մը :

Աղջիկն ըրաւ իւր պարզ պատմութիւնը : Մր. Լինքըն լսեց մտադրութեամբ, և ժպտելով հարցուց . «Բայց, սիրելիս, ես ի՞նչպէս գիտնամ թէ շիտակ է պատմածդ» : «Պրն. Նախագահ», պատասխանեց աղջիկը եռանդով, «իմ խօսքս իբրև երախտարութիւն ընդունելու ես» : «Կ'ընդունիմ», ըսաւ Նախագահը, տեղէն ել-



ՏԱՐԻՔԻՆԱԿ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՃԱՐՏՆԻ ՄԵՃ

րեցաւ, այնպէս որ երբ եզելութիւնը պատմեց իւր ընտանիքին, շատ յուսահատած երեցաւ :

«Հայր, ըսաւ նորա մեծ դուստրը, տասներեք տարեկան աղջիկ մը, հոգ մի ըներ, ես Նախագահ Լինքընի պիտի երթամ, և գիտեմ որ իրաւունք պիտի ընէ քեզի» :

Աղջկան հայրը և մայրը աշխատեցան անոր միտքը դարձունել, ըսելով թէ օգուտ չունէր Նախագահ Լինքընը տեսնելը, վասն զի նա պիտի չուզէր ուշ գնել խոտ և ցորեն կշտողի մը գործէ հանուելուն նման ոչինչ բանի մը : Բայց Նախագահին արգարախրութեան վրայ աղջկան հաւատքն այնպէս զօրաւոր էր որ գնաց Սպենսկ Տունը (Նախագահին պալատը), և երեք օր նախասենեկին մէջ համ-

լելով և բռնելով աղջկան ձեռքը . «Եկուր իմ հետս Մր. Սթենթընի» :

«Սթենթըն», ըսաւ Մր. Լինքըն, մինչ կը մտնէին Պատերազմական մեծ պաշտօնէին սրահը, «կ'ուզեմ որ լսեք սա աղջկան պատմութիւնը» : «Ժամանակ չունիմ հիմա», ըսաւ ծանր գործերով զբաղեալ պաշտօնեան : «Բայց պէտք է որ լսեք», պատասխանեց Մր. Լինքըն : «Ես այսօր չեմ կրնար վայրկեան մը անգամ ուրիշ գործի տալ, Պրն. Նախագահ» : «Վաղը նորէն եկուր, սիրելիս, և Մր. Սթենթըն այն ատեն պիտի լսէ քեզի», ըսաւ Նախագահը մինչ գուրսկ ելլէին անկէ :

Հետեւեալ օրը խնդրն ներկայացուցին աղջիկը Նախագահին, որ կրկին տարաւ գնա Մր. Սթենթընի քով : Պաշտօնեան այս անգամ լսեց աղջկան

պարզ պատմութիւնը, և այնպէս ազ-
դուեցաւ անկէ որ տակաւին աղջիկը
իւր խօսքը չըմբոստացած պրօպագան-
դայի տեսքով, «Ս» նիւրաւ»:

Նստաւ իւր գրասեղանին առջև, և
գրեց հրաման մը որ խոսի այնպիսի
նէն զրկուի այն նենգաւոր պաշտոն-
եան, և աղջկանը հայրը գրուի անոր
տեղը նոյն պաշտօնին վրայ:

Մը. Լինքըն բնաւ չնուստացաւ այն աղ-
ջիկը, պատմեց անոր վրայ Ազգային
ժողովոյ քանի մը անդամներուն, և
ասոնց ազդեցութեամբ անոր երկու-
եղբայրները պաշտօնի վրայ գրուե-
ցան երեսօտական ժողովոյն մէջ:

ՏՂՈՒ ՄԸ ՑԵՐԵԿՈՒԱՆ ԵՐՈՋԸ

Ամբարուան սկիզբները պայծառ և
տաք օր մը, 1781 թուականին, լոն-
տոն քաղաքին փողոցներուն մէջ մար-
դիկ մեծ բազմութեամբ կ'երթային և
կուգային, և ահա իբր տասնութիւն
տարեկան տղայ մը իւր երկար և թուի
մազերը պարանոցէն վար կախուած,
և ունենալով տարօրինակ նայուածք
իւր խոշոր կապոյտ աչաց մէջ, կամաց
կամաց քայլելով կ'անցնէր մեծ քա-
ղաքին ամենէն գործունէայ և ամենէն
բազմամարդ փողոցներէն մէկուն մէ-
ջէն, բայց այնպէս ընկղմած իւր խոր-
հուրդներուն մէջ որ հազիւ կը զգար
իւր շուրջը վիտացող բազմութեան
իրեն դայչիլը և զարնուիլը: Տեսնու-
ղին այնպէս կը թուէր թէ կը մտա-
ծէր պատերազմի մը կամ տեսակ մը
աստիկ կուսոյ վրայ, վասն զի յա-
ճախ իւր երկու բազուկները յանկարծ
դէպ յառաջ կը նետէր, և ասով քիչ
վտանգի չէին ենթարկուէր անցորդ-
ներուն աչքերը կամ կողերը: Իսկոյն
կեցաւ անշարժ, և զարմանք չէ որ
ձեռքերը աստ և անդ երկնցուցած
պահուն անոնցմէ մին ուղղակի մտած
էր դիպուածով անկէ անցնող բարձ-
րահասակ մարդու մը վերաբրտին
զրպանը: «Ի՞նչ է այս. քու այդ մա-
տող հասակիդ մէջ գողութիւն», այո-
ւաց մարդը, դառնալով դէպ ի տղան
և բռնելով զին ա: «Բե՛հ, փոքր անա-
ուակ, քե՛զ. կ'ուզես կողպակը՞ զըր-
պանս ցերեկուան լցիսին մէջ?»

«Ի՞նչ, ես չեմ ուզեր կողպակը քեզ»,
բռաւ տղան, աչուքները տնկած անոր
վրայ նայելով իբր թէ երազ տեսնե-
լէն նոր արթնացած: «Կարծեցի թէ
կը լողայի»: «Լողա՛լ», պոռաց մար-
դը: Բարձրաձայն ժիծաղելով: «Իս
լաճ էի թէ մարդոց բազմութիւնը կու-
ուած է ձող, բայց բնաւ չէի լսած թէ
երբեք մեկը լողացած է անոր մէջ: Գուն
կամ սուտ կը խօսիս ինձի, կամ խե-
րոզարած ես»: «Իբրաւ որ ես ո՛չ սուտ
կը խօսիմ, ո՛չ խելքս կորսնցուցած
եմ», բռաւ տղան: «Իս կը խորհէի այն
մարդուն վրայ որ լողալով անորմէջ
Ելեւսպոստոսէն, — այն է Լէանտըրը,
գիրտէք, — և ինձ այնպէս թուեցաւ
թէ ես ալ լողալով կ'անցնէի անկէ:»
«Ո՛հո», պոռաց մարդը, «այդպէս է:
Բարեկամս, կ'երևի թէ կարգաւ շատ

կը սիրես:» «Իս կ'ուզէի բոլոր օրը
կարդարով անցունել եթէ կարող ըլ-
լայի», պատասխանեց տղան եռանդով:
«Բայց միայն քանի մը գիրքեր ունիմ,
և դանձնք բոլորը կարդացած եմ կրկին
և կրկին»:

«Շատ լաւ ուրեմ», բռաւ մարդը,
«ես գրքատան մը մէջ կը գտնուիմ, և
եթէ կ'ուզես՝ ահա քեզի մուտքի
տուճակ մը, որով վեց ամիս կարող
ըլլաս գալ հոն, և այն ատեն կրնաս
կարդալ ուզածդ չափ»:

Էւ այն օտարականը չիրնալով իւր
ծիծաղը բռնել այս գուարճալի դէպ-
քին վրայ, արագ մը յառաջ անցաւ
գնաց, քիչ մտածելով թէ ողջ պիտի
մնար և պիտի տեսնէր այն տղին պա-
տիւ և փառք ընդունելը համայն Անգ-
ղիայէ իբրև մին անոր մեծադոյն բա-
նաստեղծներէն, և թէ պարծանօք
պիտի պատմէր բոլոր իւր բարեկա-
մներուն որ ինք ժամանակաւ ինչպէս
մարդասիրութիւն ցուցած էր Սամուէլ
Թէյլըր Քոլէրի՛ն:

ՈՒՆԱԿԱՆՁ

Հետագայ դէպքը լաւ կը բացատ-
րէ թէ ինչ պատճառներով շատ ան-
գամ կ'արին աղբիւ բնաւորութիւնը:
Հինգ տարի առաջ Ալալու՛ն անուն
վաճառականական նաւը ճամբայ ելաւ
Ատլանտեան Ովկիանոսի նաւահան-
գիսանքէն մէկէն, երթալ Արիպիկէի
ժողովոցը: «Սյո՛ղ նաւը բնաւ պիտի
չհասնի հոն», բռաւ նաւաւորացիին
վրայ դանուող ծերունի նաւատի մը:
«Ինչո՞ւ համար», բռաւ քովը կայտա-
ղներէն մէկը, «ինձ այդ հաստատուն և
լաւ շինուած նաւ մը կ'ընքի»: «Պէտք
էր որ», բռաւ ծերունին, «այդ նաւն
ուրեմար պղծէ յառակ մը: Տես ի՞նչ
դտայ անոր տաշտին վրայ»:

Երկնցուց ձեռքը սրուն վրայ կը
դանուէր կախուղ սկիւր բան մը, ու
ականջ (Բո՛տ) մը իւր կեղևին մէջ:

«Ի՞նչ փնտս կրնայ ընել այդ», Բ-
սաւ միւսը ծիծաղելով, «այդ է ան-
փնտս և կիսամեռ արարած մը»: «Բայց
ատոր նման անփնտս և կիսամեռ ա-
րարածները կ'ուտեն ամենէն հաստա-
տուն նաւերը, և փաճած տաշտ մը կը
թողուն դանձնք», պատասխանեց ծե-
րունի նաւատին:

Նոյն տարւոյն վերջը լուեցաւ թէ
Ալալու՛ն, այն ազուր նաւը, ընկղմած
էր: Ուրականջները կերած էին այն
հաստատուն կաղնի ատողները և
կործանում և կորուստ բերած էին
նաւուն:

Ո՞րչափ զօրաւոր տղաք և երիտա-
սարդներ կ'ըլլեն զպրոցներէն կամ
գոյններէն, մեծ յոյսերով թէ շատ
պիտի ապրին և իրենց առջև ունին
կենաց երկար ճանապարհորդութիւն
մը: Անոնք աղբիւ բնասնիրէ են թեր-
ևս և լաւ դաստիարակութիւն ընդու-
նած. ժառանգած են թերեւս հուժ-
կու մարմին, և արթուն միտք. ես
համեատ, իրենց պատիւը պահող և
բարձր դիրքի համնելու աշխատող:

ունին մասնաւոր ընտիր տաղանդ-
կամ կոչում, որով բոլորովին հա-
ւանական կ'երևի անոնց յաջողու-
թիւնը: Նաւը ամէն երևոյթովը հաս-
տատուն է և դիմացկուն. առագաստ-
ները կը պարզուին, հովը յաջող է, ա-
րեւը կը ճառագայթէ, ամէն մարդ կը
դուշակէ թէ լաւ ճամբորդութիւն մը
պիտի ունենայ այն:

Բայց այն զօրաւոր ատողներուն
վրայ արդեօք չարածծի ուրականջներ
փակած են: Սա պատանին կը սիրէ
անմաքուր կատակներ, և ա՛յն ատեն
միայն երջանիկ է երբ կը գտնուի ցած
ընկերներու մէջ: Սա կայտառ, փայ-
լուն երիտասարդը որ սիրելի է ընկե-
րաց մէջ, միայն իւր հանգիստը և
զիւրութիւնը կը փնտռէ. ուրիշ «բարի
տղայ» մը յարգ չընծայեր ստակի,
թէ իւրն ըլլայ այն թէ՛ իւր ընկերին:

Այն պտօնի բայց զանց առնուած
վարմունքներն են որ այն անփնտս կեն-
դանիններուն պէս յարունակ կը կրճեն
և կ'ուտեն ամենէն զօրաւոր բարե-
մասնութիւնները՝ մինչև որ կործանեն
զանոնք: Միտք պահեցէք, տղաք,
թէ դժուար է մաքրել զանոնք երբ
ճամբորդութիւնը կես եղած է: Մեծ
մոլորթիւն մը որ աշխարհի արհամար-
հեցի կ'ընէ զմեզ, կամ պատիժ կը
կրենք անոր համար, բնականապէս կը
շանսնը թօթուել մեր վրայէն ուժով,
բայց փոքրիկ ունակութիւնները, մաս-
կութեան ժամանակը շար բնութիւն-
ները սովորաբար կը մնան մեզի հետ:

ՊԱՏԱՍՈՒՆ ՀԱՆՆԵԼՈՒԿ

Գնկանքեր ամաց հանելուկն պատասխան են հետագայ
բառերը աւ կարգաւ. Յ Ո Ր Է Լ
Մ Ո Ղ Ե Ս
Մ Ո Վ Ա Ռ
Յ Ո Վ Ա Ս
Յ Ո Ր Ա Ր Ե Ս Ե Ս Ե Ս Ե Ս Ե Ս

Ներուն վոյ կարգացուած անունները՝ ՅՈՎԱ և ՅՈՎԷ,
Լուծեցին.— Բ. Պոյն. Եւզիկ Թ. Մինասեան, Գ. Ս. Գաբ-
րիէլեան, Ե. Աբրահիմ Գ. Քիւսիսեան, Պետրոս Գ. Կէրեկ-
եան, Գարսիպալ.— Միջակ Բ. Գարրիէլեան, Համարձում
Պոլեան, Զ. Ս. Յովակիմեան, Միքայիլ Յովակիմեան,
Խորէն Ե. Ալիմեան, Ե. Ս. Պետրոսեան, Սաղաթիւ
Կարայեան, Միւսաբեան Զ. Գերայեան, Յովանէս Ապո-
եան, Վարդան Պապատեան, Միքայիլ Գ. Մինասեան,
Խաչիկ Անիսեան, Սարգիս Միքայիլեան, Կարապետ Գ. Կար-
ուկեան, Յովսէփ Յարսեան, Աստուրոս.— Յեղիղի Դ.
զարման, Յեղիղի.— Անիսեան Յովակիմեան, Գրեգոր Կար-
պետեան Յովակիմ.— Գայրու Ալեասեան, Միքայիլ Զ. Համ-
բարձումեան, Արարիկեան Գ. Արարիկեան, Քրիստոս.—
Զարկե Զ. Գերայեան, Մարտի.— Յարութիւն Կ. Մարտի-
եան:

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԻՔԵՆ

1. Զար Նախարար մը,
2. Գնա մը Պաշտանու մտ,
3. Գաղթի սրտաց մի,
4. Տեսողը (մարգրէ) մը,
5. Բաղք ուր Յիսու երևեցի հորա մը զործիչ:
Մէն մը բաւ կը բացկուի կեն գիրքի, և վերջինեկա
կարգաւ կարգաւ տակ շարուելով կը կարմը քառակուսի մը
որով թէ՛ կարեւր ամ և թէ՛ վերին կը կարգաւորուելով պիտի
սեռանին շիր շոյն բառերը և նոյն կարգաւ

Մարտի
ՅԱՐՈՒԹԻՒՆ Կ. ՄԱՐՏԵԱՆՆԱՆ

Ամերիկայի Միտիսնարայ ընկերութեան կողմէն,
Արտամատչող
Տնօրէն—Կիւրապետը
Ֆինանսներու կողմէն

ԿՈՍՏԱՆՆՈՒԹՅԱՆ
Ի ՏՅԱՐԱՆԻ Ա. ՅԱՅԱՆ ՅՈՅԱՆԵԱՆ